

ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 10

Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ և արժեզրկում

Հղումներ

- «Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՄ 9
- «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ» ՀՀՄՄ 34
- «Ակտիվների արժեզրկում» ՀՀՄՄ 36

Նախապատմություն

1. Կազմակերպությունից պահանջվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատել գուղվիի արժեզրկումը և, եթե անհրաժեշտ է, այդ ամսաթվով ճանաչել արժեզրկումից կորուստ՝ համաձայն ՀՀՄՄ 36-ի: Մակայն հնարավոր է, որ հաջորդող հաշվետու ժամանակաշրջանի վերջում պայմաններն այնպես փոփոխված լինեն, որ արժեզրկումից կորուստը կրճատվեր կամ տեղի չունենար, եթե արժեզրկման գնահատումը իրականացվեր միայն այդ ամսաթվով: Սույն մեկնաբանությունը տրամադրում է ուղեցույց, թե արդյոք տվյալ տեսակի արժեզրկումից կորուստները երբևէ պետք է հակադարձվեն, թե ոչ:
2. Սույն մեկնաբանությունը դիտարկում է ՀՀՄՄ 34-ի պահանջների և ՀՀՄՄ 36-ի գուղվիի արժեզրկումից կորստի ճանաչման միջև փոխկապակցվածությանը, և այդ փոխկապակցվածության ազդեցությունը հաջորդող միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

Խնդիր

3. ՀՀՄՄ 34-ի 28-րդ պարագրաֆը պահանջում է, որ կազմակերպությունը կիրառի միևնույն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը իր միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվություններում: Այն նաև սահմանում է, որ «կազմակերպության հաշվետվությունների հաճախականությունը (տարեկան, կիսամյակային կամ եռամսյակային) չպետք է ազդի դրա տարեկան արդյունքների չափման վրա: Այդ նպատակին հասնելու համար միջանկյալ հաշվետվությունների պատրաստման նպատակով չափումները պետք է կատարվեն «տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը» հիմունքով»:
4. ՀՀՄՄ 36-ի 124-րդ պարագրաֆը սահմանում է, որ «Գուղվիի գծով ճանաչված արժեզրկումից կորուստը չպետք է հակադարձվի հետագա ժամանակաշրջանում»:
- 5-6. [Հանված է]
7. Սույն մեկնաբանությունը քննարկում է հետևյալ հարցադրումը՝

Պե՞տք է արդյոք կազմակերպությունը հակադարձի միջանկյալ ժամանակաշրջանում ճանաչված գուղվիի արժեզրկումից կորուստները այն դեպքում, եթե այդ կորուստները չէին ճանաչվի, կամ կճանաչվեին ավելի փոքր չափով, եթե արժեզրկման գնահատումը տեղի ունենար միայն հաջորդ ժամանակաշրջանի վերջում:

Փոխհամաձայնություն

8. Կազմակերպությունը չպետք է հակադարձի նախորդ միջանկյալ ժամանակաշրջանում ճանաչված գուղվիի արժեզրկումից կորուստը:
9. Կազմակերպությունը չպետք է այս փոխհամաձայնությունը համանմանորեն տարածի ՀՀՄՄ 34-ի և այլ ստանդարտների միջև հնարավոր տարածայնությունների առարկա հանդիսացող այլ հարցերի վրա:

Ուժի մեջ մտնելը և անցումը

10. Մույն մեկնաբանությունը կազմակերպությունը պետք է կիրառի 2006 թվականի նոյեմբերի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ֆինանսական հաշվետվությունների համար: Ավելի վաղ կիրառումը խրախուսվում է: Եթե կազմակերպությունը սույն մեկնաբանությունը կիրառման մեջ է դնում 2006 թվականի նոյեմբերի 1-ից առաջ, ապա այն պետք է բացահայտի այդ փաստը: Կազմակերպությունը պետք է սույն մեկնաբանությունը առաջընթաց կիրառի գուդվիլի նկատմամբ այն ամսաթվից, երբ առաջին անգամ կիրառման մեջ է դրել ՀՀՄՄ 36-ը: Կազմակերպությունը պետք է սույն մեկնաբանությունը առաջընթաց կիրառի բաժնային գործիքներում ներդրումների և սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների նկատմամբ այն ամսաթվից, երբ կիրառման մեջ է դրել ՀՀՄՄ 39-ի չափման չափանիշները:
- 11-13. [Հանված է]
14. 2014 թվականի հուլիսին հրապարակված ՖՀՄՄ 9-ով փոփոխվել են 1, 2, 7 և 8 պարագրաֆները և հանվել են 5, 6, 11-13 պարագրաֆները: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ փոփոխությունները, երբ կիրառում է ՖՀՄՄ 9-ը: